ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ XII ԴԱՐԻ 40—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ

XII դարի 40—70-ական թթ. Կիլիկիայում կառավարած բյուզանդական պաշտոնյաների մասին տեղեկություններ են հաղորդում հունական, հայկական, լատինական, ասորական և արաբական սկզբնաղբյուրները։ Սակայն դրանք դեռևս ի մի չեն հավաքված և մենք պատկերացում իսկ չունենք այդ պաշտոնյաների իրավասությունների ոլորտի, գործունեության տարածքի և, որ ամենակարևորն է, Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների ժամանակագրության մասին։

Մինչև XII դարի 30-ական թթ. Ռուբինյան հարստության ներկայացուցիչները Բյուզանդիայի կողմից դիտվում էին որպես Կիլիկիայի իշխողներ և կայսրության ստորականներ, թեև կայսրության գերակայությունը հունական աղբյուրների մեջ արտացոլված է միայն Դեաբոլյան հաշտության պայմանագրում, իսկ հայկական սկզբնաղբյուրներում Թորոս I-ը և Լևոն I-ը երբեմն կրում են բյուզանդական սևաստոս պատվանունը[2]*։ Հիշատակված տիտղոսով պատվում էին նաև Լամբրոնի տերերը մինչև XII դարի 80-ական թթ.։ Պրոտոսևաստոս և սևաստոս տիտղոսները պատահում են հայկական սկզբնաղբյուրներում, երբ խոսքը վերաբերում է Թորոս I-ին։ Այնուամենայնիվ, ոչ միշտ կարելի է ենթադրել, թե դրա կրող Ռուբինյան պայազատը*

---

[1] *Հանազան պատմական իրադարձությունների կապակցությամբ պատմագրության մեջ, սկսած Մ. Չամչյանից ու Լեբոյից, հիշատակվում են Կիլիկիայի կառավարիչներից մի քանիսը՝ Անդրոնիկոս Կոմնենոսը, Անդրոնիկոս Ֆերբենոսը և Ալեքս Աքսուխ (տե՛ս Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց. Հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 68—74, 76—77, 97—99։* Histoire du Bas-Empire, par Lebeau, nouvell édition, revue entiérement, corrigée et augmentée d'aprés les historiens crientaux, par M. De Saint-Martin, et continuée par M. Brosset Jne, t. XVI, Paris, 1834, pp. 142, 219, 227; Г. Г. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 111—113, 125; F. Tournebize. Histoire politique et religieuse de l'Arménie. Paris, 1900, pp. 176, 180—181, 239—240. R. Grousset. Histoire des croisades et du royaume franc de Jerusalem. T II, Paris, 1935, pp. 333, 505, 566; St. Runciman. A History of the Crusades. Vol. II, London—New-York—Melbourne, pp. 332, 364, 377): *Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ նորություն են Ֆ. Շալանդոնի դիտողությունները (տե՛ս* F. Chalandon. Jean II Comnène (1118—1143) et Manuel I Comnène (1143—1180). Les Comnène, études sur l'empire Byzantin au XIe et au XIIe siècles. T. II, Paris—Picard, 1912 pp. 426, 427—428, 529—530): *Ֆրանսիացի բյուզանդագետը, ի հակադրություն վերոհիշյալ հեղինակների, դիտե մինչ այդ դիտությանը անհայտ Կիլիկիայի կառավարիչներ (տե՛ս նույն տեղում, էջ 526—527, ծան. 2)։ Ըստ Ֆ. Շալանդոնի, XII դարի 60-ական թթ. Կիլիկիայում իշխել են հետևյալ դուքսերը. 1160 թ. Միքայել Բրանասը, 1162 թ. Անդրոնիկոս Ֆերբենոսը (Եվֆերբենոս), 1163 և 1164 թթ. Կոստանդին Կալամանոսը (Կոլոման), 1165 թ. Ալեքս Աքսուխը։ Այս ժամանակագրությունը կազմելիս Ֆ. Շալանդոնը ճիշտ չի հասկացել Հովհաննես Կիննամոսի վերջին վկայությունը Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների մասին (տե՛ս* Ioannis Cinnami Epitoma, rerum ab Ioanne et Alexio Comnenis gestarum. Bonnae, 1836, p. *286, այսուհետև՝* I. C.*) և խառնել է բյուզանդական պատմիչի հիշատակած Կիլիկիայի կառավարիչների հերթականությունը։*

[2] *Այս պատվանվան մասին տե՛ս* L. Brèhier. Les institution de l'empire Byzantin. Paris, 1949, pp. *139, 142. Ուշագրավ է, որ նույն տիտղոսը կրում էին նաև Բուլղարիայի վարչական համակարգի ներկայացուցիչները (տե՛ս* Н. Хр. Петров. О титулах „севаст„ и „протосеваст„ в средневековом болгарском государстве.—ВВ, т. XVI (1959), с. 52—64):

հանուշում է կայսրության գերակայությունը և ենթարկվում Բյուզանդիայի ներքին վարչատնտեսական համակարգին։ Մինչև XII դարի 30-ական թթ. Կիլիկիան փաստորեն չէր մտնում կայսրության տարածքի մեջ։ Խնդիրն այլ է Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականության տեսանկյունից։ Բյուզանդիայի համար իրավաբանական ապացույց էր, որ հնում Կիլիկիան մտել է նրա սահմանների մեջ. այդ իսկ պատճառով, չնայած Կիլիկիայի և այդ ժամանակվա բյուզանդական տարածքների կտրվածությանը, Ռուբինյան իշխողները դիտվում էին իբրև կայսեր ստորականներ և կայսրությունը չէր համաձայնում ընդունել այդ երկրամասի անկախությունը։

1137 թ. Կիլիկիան գրավելուց հետո, երբ Հովհաննես II Կոմնենոսը (1118—1143) Լևոն I (1129—1137) Ռուբինյան իշխանին գերեվարելով տարավ Կոստանդնուպոլիս, Բյուզանդական կայսրությունը ստիպված էր Կիլիկիայում կազմակերպել երկրամասը կառավարող վարչատնտեսական համակարգ, որը ոչ միայն պիտի ենթարկվեր ու համապատասխաներ Բյուզանդիայի կառավարման համակարգին (և արտաքին ու ներքին քաղաքական շահերին), այլև հարմարեցված պետք է լիներ Կիլիկիայում բյուզանդական հովանավորության տակ անցած իշխանների ձգտումներին։ Մինչև XII դարի 50-ական թթ. Կիլիկիայում բյուզանդական իշխանությունների գոյության, նրանց գործողությունների, այդ երկրամասը կառավարելու բյուզանդական համակարգ ստեղծելու միտումների ու փորձերի մասին միայն հատուկենտ վկայություններ են հասել։

Հովհաննես Կոմնենոսի կառավարության վերջին տարիներին Բյուզանդական կայսրության արևելյան բաղաքականության հիմնական մտահոգություններից մեկն էր դարձել Կիլիկիան արտաքին ուժերի ոտնձգություններից պաշտպանելու հարցը, քանի որ այդ երկրամաս էին ներխուժում արևմուտքից Իկոնիայի սուլթանությունը, հյուսիսից՝ Դանիշմանդյան ամիրայությունը, հարավից՝ Անտիոքի խաչակրաց իշխանությունը։ Կոստանդնուպոլսի կենտրոնական վարչություններն ի վիճակի չէին վերահսկելու ծայրամասային ամենահեռավոր տարածքի՝ Կիլիկիայի գործերը։ Ուստի, կայսրությունը փորձ արեց ստեղծել ռազմավարչական կառավարման մի այնպիսի համակարգ, որը իրեն ընթարկվող տարածքների արտաքին ու ներքին քաղաքականության գործերում որոշակի անկախություն ունենալով հանդերձ, չառանձնանար կայսրությունից և ոչանդակեր բյուզանդական արևելյան քաղաքականության ձեռնարկումներին։ XII դարում Կիլիկիայի տարածքի վրա նման վարչական միավոր ստեղծելու միտքը պատկանում է Հովհաննես II-ին։

Անդրադառնալով կիլիկյան երկրորդ ռազմարշավը (1142—1143) ծնող քաղաքական պատճառներին, բյուզանդական պատմիչ Կիննամոսը գրում է. «Երբ իմացավ (Հովհաննես Կոմնենոսը—Ա. Բ.), որ Անտիոքի իշխան Ռայմոնդը ապստամբել է, կրկին շարժվեց դեպի Կիլիկիա, մտադրվելով Կիլիկիան և Անտիոքը Ատալիայի և Կիպրոսի հետ, որպես ժառանգություն, հանձնել Մանուելին»[3]։ Նկատելի է, որ Հովհաննես Կոմնենոսը փորձել է կառավարչական միևնույն համակարգի մեջ համախմբել իրենց ստրատեգիական դիրքով կապակցված մի շարք շրջաններ, որոնք Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստում կարևոր ռազմական դիրք ունեին[4]։ Այդ տարածաշրջանի (регион) ստեղծումը նշանակում էր մի զորահրամանատար-կառավարչի (տվյալ դեպքում՝ Մանուելի) իշխանության տակ համախմբել նշված շրջանների ոչ միայն ցամաքային բանակները, այլ նաև ռազմածովային ուժերը, քանի որ Ատալիան և մանավանդ Կիպրոսը հին ռազմածովային շրջաններ էին[5]։ Պետք է շեշտել, որ այդ տարածաշրջանի տնտեսական և ռազմական հնարավորությունների առանձնացումը ծառայելու էր կայսրության արևելյան քաղաքականության նպատակներին և կանգնեցնելու էր Իկոնիայի սուլթանության, Դանիշմանդյան ու Հալեպ-Մոսուլի ամիրայությունների առաջխաղացումը դեպի կայսրությանը պատկանող և նրա հովանավորության ներքո գտնվող փոքրասիական և հյուսիս-ասորիքյան շրջանները։ Միև-

---

[3] I. C., pp. 22–23.

[4] Նման հսկայածավալ տարածք ընդգրկող շրջանի միավորումը մեկ վարչական համակարգի մեջ չէր համապատասխանում Ալեքս I-ի ներքին քաղաքականության գծին, որին բնորոշ էր ռազմավարչական մարզերի ստեղծումը փոքր տարածքների վրա, կամ էլ մեկ քաղաքի շրջանակներում (տե՛ս H. Ahrweiler. Byzance et la mer. La marine de guerre la politique et les institutions maritimes du Byzance au VIIe—XVe siècles. Paris, 1966, p. 423—424)։

[5] H. Ahrweiler. Op. cit. p. 186.

նույն ժամանակ այդ վարչական միավորը կարող էր հենակետ դառնալ նշված պետություններ-ի վրա հարձակումներ կազմակերպելու դեպքում։ Ուշադրությունից չպետք է վրիպի նաև այն, որ Ատալիա-Կիլիկիա-Կիպրոս-Անտիոք տարածաշրջանի կառավարումը հանձնվելու էր ոչ թե սոսկ ոռեէ պետական պաշտոնյայի, այլ կայսերական ընտանիքի անդամ, Հովհաննես Կոմնենոսի կրասեր որդի Մանուելին, հավանաբար ավատի իրավունքով[6]։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, թե որքան մեծ նշանակություն էր տալիս Հովհաննես Կոմնենոսը այդ շրջաններին՝ կայսրության արևելյան քաղաքականությունը կազմակերպելու խնդրում։ Սակայն նա չկարողացավ իրականացնել իր մտահղացումը, քանի որ մահացավ նշված ռազմարշավի ժամանակ՝ 1143 թ. ապրիլի 8-ին, իսկ նրան հաջորդած Մանուելը այդ տարածքները միասնական վարչական համակարգի մեջ միավորելու փորձ չկատարեց։ Այնուամենայնիվ Կիլիկիայում Բյուզանդիայի ռազմական ուժերը ավելացնելու և, Հովհաննես II-ի նմանողությամբ, Կիլիկիայի և Կիպրոսի տարածքների վրա ռազմավարչական միավոր ստեղծելու միտումը նկատելի է նաև Մանուել I Կոմնենոսի (1143—1180) կառավարման առաջին տարիներին ձեռնարկված անտիոքյան ռազմարշավի ժամանակ։ Անտիոքի խաչակրաց իշխանության հակաբյուզանդական նկրտումներին հակահարված տալու համար նա Կիլիկիա է ուղարկում և՛ ցամաքային, և՛ ծովային ռազմական ուժեր[7], որոնց ղեկավարներին (Պրոսուխին և Դեմետրիոս Բրանասին) մենք հակված ենք համարել Կիլիկիայի ու Կիպրոսի և՛ զինվորական, և՛ վարչական ղեկավարներ։ Նման ենթադրության համար հիմք կարող է ծառայել այն փաստը, որ և՛ Պրոսուխը, և՛ Դեմետրիոս Բրանասը Անտիոքի իշխանությունեմ ռազմական գործողություններ վարելուց հետո վերադառնում են ոչ թե Բյուզանդիա, այլ առաջինը՝ Կիլիկիա[8], երկրորդը՝ Կիպրոս[9]։ Պրոսուխի ղեկավարությամբ ցամաքային բանակների վերադարձը Կիլիկիա, ու միևնույն ժամանակ Դեմետրիոս Բրանասի ղեկավարությամբ ռազմածովային նավատորմի Կիպրոսում հանդրվանելը նշանակում էր, որ Բյուզանդական կայսրությունը Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստում ստեղծում էր մասնագիտացված «բանակաթեմեր»՝ Կիպրոսը[10], որպես ռազմածովային ուժերի կենտրոն[11], Կիլիկիան՝ ցամաքային բանակների։ Բյուզանդական կայսրության համար ինչպես հնում, այնպես էլ Կոմնենոս կայսրերի իշխանության տարիներին օրինաչափ երևույթ էր ռազմավարչական մարզերի (հնում՝ բանակաթեմեր) և՛ քաղաքացիական, և՛ ռազմական ղեկավարությունը կենտրոնացնել մեկ պաշտոնյայի ձեռքում, որին ենթակվում էին մարզի բոլոր՝ վարչատնտեսական, իրավական և ռազմական իշխանությունները[12]։ Ռազմավարչական նման վերակառուցումների պատճառը Անտիոքի խաչակրաց իշխանության հարձակողական գործողություններն էին Կիլիկիայի տարածքի նկատմամբ։ Այդ իսկ պատճառով անսպասելի չէ, որ Կիլիկիայի նոր բյուզանդական կառավարչի մասին աղբյուրները խոսում են միայն այն ժամանակ, երբ Կիլիկիայում հայտնվում է Ռուբինյան իշխան Թորոս II-ը. վերջինս սպառնում էր վերացնել Բյուզանդիայի իշխանությունը Կիլիկիայում։ Բյուզանդական զորավար-կառավարիչների հիմնական պարտականությունն էր հակահարված տալ Ռուբինյաններին և ապահովել Կիլիկիայի ենթակայությունը կայսրությանը։

Կիլիկիայում բյուզանդական առաջին կառավարիչը սկզբնաղբյուրներում հիշատակվում է 1151/2 թ. դեպքերի շարադրանքում։ 1148—1151 թթ. Թորոս II-ը դժվարին պայքարից հետո կարողանում է բյուզանդացիներից և սելջուկ թյուրքերից վերադարձել Ամուդան, Վահկան, Ա-

---

6 Կիննամոսի վկայությունից չի կարելի եզրակացնել, թե Հովհաննես Կոմնենոսի իշխանության տարիներին կայսրությունը կայսեր որդիների միջև մասնատելու ձգտում է նկատվում (տե՛ս История Византии. Т. II, М., 1967, с. 300)։

7 I. C., p. 33—35; Nicetae Choniatae Historia, recensuit Ioannes Aloysius Van Dieten. Corpus Fontium Historiae Byzantinae. Vol. XI, 1—2, Berolini et Novi Eboraeci, 1975, p. 52 (այսուհետև՝ N. X.)

8 I. C., 35, N. X., p 52.

9 I. C., p. 35։ Հետաքրքիր է, որ երբ Ռընաղտ Անտիոքացին 1156 թ. ավարառում էր Կիպրոսը, այնտեղի դուքսը մի ուրիշ Բրանաս էր, Միքայել անունով (I. C., p. 173)։

10 Կ. Կահենը իրավացիորեն նշում է, որ մինչև XII դարի 50-ական թթ. Կիպրոսի մասին բացարձակապես ոչինչ չգիտենք (Cl. Cahen. La Syrie du Nord à l'époque des Croisades... Paris, 1940, p. 392)։

11 Կիպրոսը ռազմածովային ուժերի կենտրոններից մեկն էր նաև Ալեքս I-ի իշխանության տարիներին (տե՛ս H. Ahrweiler. Op. cit., p 186)։

12 L. Bréhier. Op. cit., p. 229, 234։

ռավարդան, Սիմանկլան, Առյուծբերդը։ Ինչո՞վ կարելի է բացատրել այն փաստը, որ մինչև 1151/2 թ. բյուզանդացիները պատերազմ չեն սկսում Թորոս Ռուբինյանի դեմ։ Պետք է այստեղ շեշտել երկրորդ խաչակրաց արշավանքի բարենպաստ ազդեցությունը Կիլիկիայում Ռուբինյան իշխանության վերականգնման գործում։ Այդ տարիներին բյուզանդացիները պատերազմում էին Սիցիլիայի նորմանների ու սերբերի դեմ և հսկայական ռազմական ուժեր էին կենտրոնացրել կայսրության արևմուտքում[13]։ Ահա այդ կարճատև ժամանակամիջոցում Թորոս II-ը «ոչ միայն զհայրենիս իւր դրաւեաց յինքեանս, այլ առաւել ևս տիրեաց բերդից և քաղաքաց քան զնախնիսն իւր»[14]։ Կայսրությունը, վախեցած ամբողջ Կիլիկիայի կորստից, կրկին ռազմական ուժեր է առանձնացնում Թորոս II-ի դեմ պատերազմելու համար։ Մեզ հայտնի է այդ պայքարի միայն վերջը։ Խոսքը վերաբերում է Կիլիկիայի Թումա կամ Թումաս դքսին, որի մասին մեզ հայտնի միակ վկայությունը պահպանվել է XIII դարի հեղինակ Սմբատ Սպարապետի «Տարեգրքում»։ Ըստ այդ հիշատակության՝ «Ի սոյն ամի (ի թուին Հայոց Ո=1151 թ. փետրվարի 12—1152 թ. փետրվարի 11—Վ. Բ.) Թորոս որդին Լևոնի էառ ի Հոռմէն զՄսիս և զԹիլն, և կալաւ զդուկն Թումա»[15]։

Կիլիկիայում բյուզանդական պաշտոնյայի՝ դուքսի կառավարման փաստը չափազանց ուշագրավ է, որովհետև, ինչպես գիտենք, XI դարի երկրորդ կեսին թյուրքերի, նորմանների և պեչենեգների հարձակումներից հետո կայսրության բանակաթեմային կառավարման համակարգը ամբողջովին փլուզվեց[16]։ Ալեքս I-ը ևս չկարողացավ ամբողջովին վերականգնել կայսրության հեռավոր շրջանների վարչակառավարման համակարգը։ Այնուամենայնիվ նրա իշխանության տարիներին միտում է նկատվում որոշ քաղաքների ու ոչ մեծ տարածքների կառավարումը հանձնել զինվորական պաշտոնյաների՝ նրանց ձեռքում կենտրոնացնելով նաև այդ շրջանների քաղաքացիական վարչության գործերը[17]։ Կայսերական տարածքների վարչական բաժանման այս սկզբունքը լայն տարածում ստացավ Հովհաննես Կոմնենոսի իշխանության տարիներին. դրանով է բացատրվում այն փաստը, որ իր կառավարման տարիներին մեզ հայտնի են ավելի շատ վարչատարածքային շրջաններ, որոնց ղեկավարում էր դուքս-զորահրամանատարը[18]։

1151/2 թ. Կիլիկիայում Թումաս դքսի անհաջողությունը և դաշտավայրային երկու կարևոր քաղաքների՝ Մսիսի (Մոպսուեստիա) և Թիլի (Թիլ Համտո՞ւն)[19] կորուստը, բյուզանդացիներին ստիպեց առավել ուշադիր լինել այդ տարածքների նկատմամբ և թարմ ուժեր կենտրոնացնել
ստիպեց առավել ուշադիր լինել այդ տարածքների նկատմամբ և թարմ ուժեր կենտրոնացնել
զբաղված էր արևմուտքում տեղի ունեցող ռազմական գործողություններով[20], Կիլիկիա է ուղարկում Անդրոնիկոս Կոմնենոսին՝ Թորոսի դեմ պատերազմ վարելու համար։

Ըստ Կիննամոսի, Մանուել Կոմնենոսը Անդրոնիկոսին ուղարկել էր Կիլիկիայի ու Իսավրիայի սահմանները և նշանակել էր Թորոս II-ի դեմ մղվող պատերազմի «ինքնիշխան զորավար» (στρατηγὸς αὐτοκράτωρ)[21]։ Անդրոնիկոսին զորահրամանատար է կոչում նաև Միքայել Ասորին, գրելով. «Հույների կայսր Մանուելը մտահոգվեց և Կիլիկիա ուղարկեց զորահրամանատար Ան-

---

13 Տե՛ս F. Chalandon. Op. cit., p. 320, 342։

14 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն. Վաղարշապատ, 1898, էջ 400 (այսուհետև՝ Մատթեոս)։

15 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 170 (այսուհետև՝ Սմբատ, 1956)։ Անհիմն է բյուզանդագիտության մեջ ընդունելություն գտած կարծիքը, ըստ որի Եդեսիայի իշխանության որոշ տարածքներ կայսրության հովանավորության տակ է առել Թումաս դուքսը (տե՛ս F. Chalandon. Op. cit., p. 424—425; St. Runciman. A History of the Crusades. Vol. II, p. 329)։ Այս դեպքերի մասին խոսող աղբյուրները նման ենթադրության տեղիք չեն տալիս։

16 H. Ahrweiler. Op. cit., p. 222.

17 Նույն տեղում, էջ 223։

18 Նույն տեղում, էջ 273—274։

19 Ֆ. Շալանդոնը, անդրադառնալով այս նույն դեպքերին, սխալմամբ գրում է, թե իբր Թորոսը Թումաս դքսին ձերբակալելով գրավել է Տարսոնը (այսպե՛ս) և Մոպսուեստիան (հմմտ. F. Chalandon Op. cit., p. 426)։

20 Okt. Jurewicz. Andronicos I Komnenos. Amsterdam, 1970, s. 47։

21 I. C., p. 121։

դերոնիկոսին, կայսերական ընտանիքից»[22],— շեշտում է հակոբիկ եկեղեցու պատրիարքը։ XII դարի մի այլ ժամանակագիր՝ Գրիգոր Երեցը Անդրոնիկոսին անվանում է «կողմնապահ մեծի քաղաքին Տարսոնի և Մսսայ»[23]։ Կողմնապահի պաշտոնը համապատասխանում էր այդ ժամանակաշրջանի բյուզանդական դուքսի ինստիտուտին։ Այդ պաշտոնյայի իրավասությունը տարածվում էր հատկացված երկրամասի քաղաքացիական և զինվորական իշխանությունների վրա։ Դուքս և կողմնապահ պաշտոնների նույնության մասին վկայում է Սմբատ Սպարապետը, որը բացի Գրիգոր Երեցից, մեզ հետաքրքրող դեպքերի մասին ունեցել է ինչ-որ անծանոթ սկզբնաղբյուր. «Դուքսն Անդրոնիկէ, որ ունէր զպահպանութիւն Կիլիկեցւոց աշխարհիս»,— գրում է նա[24]։ Անդրոնիկոսին դուքս են անվանում նաև XIII դարի ուրիշ հեղինակներ[25]։ Բերված սկզբնաղբյուրներից պարզ է դառնում, որ բյուզանդական στρατηγὸς αὐτοκράτωρ պաշտոնը պետք է նույնացնել Միքայել Ասորու հիշատակած զորաւիրամանատար («զօրագլուխ») և հայկական աղբյուրներում հանդիպող կողմնապան ու դուքս պաշտոնների հետ։

Աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում նաև այն մասին, թե որ տարածքների վրա էր պաշտոնավարում Կիլիկիայի դուքսը XII դարի 50-ական թթ. սկզբին։ Հովհաննես Կինեամոսը վկայում է, որ Անդրոնիկոս Կոմնենոսի իշխանության տակ են եղել Կիլիկիան և Խավրիան[26]։ Բյուզանդական պատմիչին չեն հակադրվում, սակայն նրա իշխանությունը տարածքային ավելի փոքր շրջանի վրա են տեղադրում հայկական և ասորական սկզբնաղբյուրները։ Միքայել Ասորին Անդրոնիկոսի գործունեության տարածքը կապում է Կիլիկիայի հետ[27], իսկ Գրիգոր Երեցը՝ Տարսոնի և Մսիսի (Մոպսուեստիայի)[28]։ Կարելի է ենթադրել, որ Անդրոնիկոս

-- Chronique de Michel le Syrien patriarche Jacobite d' (1166—1199). Éditer pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, p. 310 (այսուհետև՝ M. S.)։ Միքայել Ասորու երկի հիշյալ հատվածը (ասորերեն) հրատարակիչը լրացնում է Բար Երրեոսի «Ժամանակագրության» բնագրով, քանի որ մեզ հետաքրքրող մասում Միքայել Ասորու «Ժամանակագրության» ձեռագրից մոտ տասը էջ պակասում է (M. S. t. III, p. 309, n. 3)։ Միքայել Ասորու երկի հայերեն թարգմանության խմբագրությունները այս հատվածում համահնչյուն են Բար Երրեոսի երկի բնագրի հետ։ Ընդարձակ խմբագրությունը հետևյալ կերպ է նկարագրում դեպքը. «Եւ լուեալ զայս թագաւորն Յունաց (Մանուել—Ա. Բ.) և բարկացաւ ի վերայ Պարոն Թորոսի և առաքեաց զԱնդրոնիկոս զօրագլուխն մեծ ամբոխիւ ի Կիլիկիա» (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի ասորւոց պատրիարքի հանեալ ի հնագոյն գրչագրէ. Երուսաղէմ, 1871, էջ 426, այսուհետև՝ Մ. Ա., 1871)։ Իսկ համառոտը՝ «Եւ թագաւորն Յունաց բարկացաւ ի վերայ Թորոսին վի առ զամենայն երկիրն ի ձեռաց Յունաց, և առաքեաց զԱնդրոնիկոս զօրագլուխն իւր ծանր ամբոխիւ ի վերայ նորա» (Տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոց Ժամանակագրութիւն. Երուսաղէմ, 1870, էջ 432, այսուհետև՝ Մ. Ա., 1870)։ Ուշագրավ է, որ ասորերեն բնագրի ֆրանսերեն թարգմանության le general-ի (այստեղ բերում ենք ֆրանսերեն թարգմանությունը, որովհետև Բար Երրեոսի ասորերեն բնագիրը ձեռքի տակ չունենք) դիմաց հայերեն խմբագրությունը ունի զօրագլուխ տերմինը, որը համապատասխանում է հունարենի στρατηγὸς αὐτοκράτωρ-ին։ Հենվելով Միքայել Ասորու «Ժամանակագրության» վրա Անդրոնիկոսին զօրագլուխ է անվանում նաև Վարդանը (տե՛ս Մեծին Վարդանայ Բարձրաբերդացւոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Խին. Մոսկվա, 1861, էջ 164)։ Զինվորական այս տիտղոսի մասին տե՛ս H. Ahrweiler. Recherches sur l'administration de l'Empire Byzantin IXe —Xe siècles (տե՛ս հոդվածը հեղինակի հոդվածների հետևյալ ժողովածուում՝ Études sur les structures administratives et sociales de Byzance. London, 1971, VIII, p. 56, n. 3)։

23 Մատթեոս, էջ 400։

24 Սմբատ, 1956, էջ 170։

25 Սամուել քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 214։

26 I. C., p. 121.

27 M. S., t. III, p. 310։ Միքայել Ասորու հայերեն թարգմանությունների խմբագրությունները հետևում են ասորերեն բնագրին (տե՛ս ծան. 17)։ XIII դարի գրեթե բոլոր հայկական սկզբնաղբյուրները Անդրոնիկոսի իշխանությունը տարածում են միայն Կիլիկիայի վրա (հմմտ. Սմբատ, 1956, էջ 170 և այլուր)։

28 Մատթեոս, էջ 400։

Կոմնենոսի փաստական իշխանությունը տարածվում էր Կիլիկիայի այն հատվածի վրա, ուր դեռ չէր հասցրել հաստատվել Թորոս II Ռուբինյանը, սակայն կայսրությունը իր զորահրամանատարի առջև խնդիր էր դրել հպատակեցնել ողջ Կիլիկիան, այդ իսկ պատճառով Անդրոնիկոսը չէր ցանկանում ճանաչել Թորոս II Ռուբինյանի իշխանությունը, չնայած վերջինս բազմիցս հավաստիացնում էր, թե «ծորտ եմ թագաւորին և քո, մի բարկանար»[29]։ Ժամանակագրի այս վկայությունը ցույց է տալիս, որ Թորոս Ռուբինյանը փորձում էր ստանալ կայսեր ստորակայի կարգավիճակ, քանի որ բյուզանդական դուքսը «ընդեղեր զնոսա. և նոքա առ սէր և ահի մեծի թագաւորին Յունաց ոչ համարձակէին տալ ընդ նմա պատերազմ, այլ հանապազ սիրոյ աղագաւ ապաշէին մնալ նմա ի հնազանդութիւն»[30]։ Դուքսին շահագրգռելու փորձերը վկայում են այն մասին, որ բյուզանդական իշխանությունները դեռ բավական ամուր դիրքեր ունեին Կիլիկիայում։ Դրան նպաստում էին մասնավորապես մի քանի հանգամանքներ. ա) Կիլիկիայում հնուց ի վեր բնակվում էին հույներ, որոնք շահագրգռված էին այդ տարածքի վրա վերականգնել Բյուզանդիայի իշխանությունը։ բ) Կայսրությունը զորամիավորումներ էր պահում Կիլիկիայում։ Այս առումով ուշագրավ է Գրիգոր Երեցի վկայությունը, թե Անդրոնիկոս Կոմնենոսը Մսիսի մոտ Թորոսի դեմ է հանել տասներկու հազարանոց զորաբանակ[31]։ գ) Բյուզանդական կայսրությանը աջակցում էին բյուզանդամետ հայ իշխանները, որոնք պահպանում էին իրենց անկախությունը Ռուբինյաններին հակադրելով կայսրությանը։

Վերոհիշյալ ուժերը կարող էին միայն նեցուկ լինել Կիլիկիայում բյուզանդական եկեղեցական, կառավարչական, իրավարանական իշխանությունների ոյատևմանը։ Թորոս II-ը ստիպված էր հաշվի առնել այդ ուժերը և ամեն գնով կանխել Բյուզանդիայի հետ նոր բախումը։ Սակայն Անդրոնիկոսը չի հաշտվում Ռուբինյանների հետ և շրջապատում է Մսիսը[32]։ Թորոս II-ը այդ քաղաքի պարիսպների մոտ ջախջախում է բյուզանդական բանակը, որի կազմում իրենց զինական ուժերով կռվում էին նաև հայ իշխաններ Լամբրոնի տեր Օշինը, Պապեռոնի տեր Սմբատը, Բարձրաբերդի տեր Վասիլը, Պռոկանի տեր Սմբատը։ Ուշագրավ է, որ Թորոս II-ը բյուզանդացի գերիներին զինաթափելով, ազատ է արձակում, իսկ հայ իշխաններին, մանավանդ Օշին Լամբրոնացուն, պարտադրում է ռազմատուգանք վճարել և պատանդ թողնել[33]։ Թորոս II-ի նպատակն էր կախման մեջ պահել բյուզանդամետ իշխաններին և պարտադրել Ռուբինյանների իշխանությունը, ի հակադրություն բյուզանդացիների, որոնք շարունակում էին տիտղոսներ շնորհել նրանց և համարում էին կայսրության պաշտոնյաներ[34]։ 1151/2 թ. դեպքերը ցույց են տալիս, որ Կիլիկիայի բյուզանդամետ իշխանների գլխավոր պարտականություններից մեկը իրենց զինված ուժերով բյուզանդական բանակին օգնություն ցույց տալն էր։ Այդ իսկ պատճառով Թորոս II-ը փորձում էր խնամիական կապեր հաստատել նրանց պարագլուխ Օշին Լամբրոնացու հետ և այդ ճանապարհով լուծել իշխանության առջև կանգնած դժվարությունները։

1151—1152 թթ. Կիլիկիայի համար մղվող համառ պայքարում կայսրությունը տանուլ տրվեց և ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել Կիլիկիան վերանվաճելու պլաններից։ Իսկապես, մինչև 1158 թ. Կիլիկիայում չի հիշատակվում որևէ բյուզանդական կառավարիչ, ավելին՝ Թորոս Ռուբինյանը այդ ժամանակամիջոցին Վիլհելմ Սուրացու կողմից անվանվում է Տարսոնի տեր[35] (այդ քաղաքը Կիլիկիայի բյուզանդական մարզի վարչական կենտրոնն էր և կայսերական դուքսի նստավայրը)։ 1154—1156 թթ. Մանուել I-ը փորձում էր ընկճել Թորոս Ռուբինյանին, նրա դեմ հրահրելով մերթ Իկոնիայի սուլթանությունը, մերթ Անտիոքի լատինական իշխանությունը։ Սակայն նրա ձախողվեց նաև այդ մտահղացումը և այս երեք պետությունների միջև քաղաքական դաշինք հաստատվեց, ավելին, Կիլիկիայի և Անտիոքի տերերը ռազմար-

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, էջ 401։

32 I. C., p. 123։ Մատթեոս, էջ 400—401։

33 Մատթեոս, էջ 401։ Սմբատ, 1956, էջ 170—171։ Սամուել, էջ 216։ Ն. Ակինյան. Ներսես Լամբրոնացի. Վիեննա, 1956, էջ 427—428։

34 Աղբյուրները վկայում են, որ Լամբրոնի Հեթումյանները բյուզանդական պատվանուն էին կրում. «պատուեցաւ ի Յունաց արքայէն Ալեքսէ՝ սեբաստոս անուամբ» (տե՛ս Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 411)։

35 Willermo Tyrensis. Historia rerum, RHC, hist. occid., t. I, II partie. Paris, 1844, pp. 834, 859 (այսուհետև՝ W. T.)։

շավ ձեռնարկեցին դեպի Կիպրոս (1156 թ.), Մանուել Կոմնենոսը մտահղացավ կրկին ներխուժել Կիլիկիա և Անտիոք։ Գրիգոր Երեցը բյուզանդական 1158—1159 թթ. ռազմարշավից հետո Թորոսին կոչում է «Պանսեբաստիոս»[36]։ Դժվար է միայն այս սկզբնաղբյուրի վրա հենվելով դատել այս տեսակետի կիլիկյան գործածության բուն նշանակության մասին[37]։ Համենայն դեպս աղբյուրները մինչև 1162 թ. բյուզանդական որևէ դուքսի անուն չեն հիշատակում, ու մեզ թվում է, թե «Պանսեբաստիոս» տիտղոսը կիլիկյան պայմաններում պետք է նշանակեր Կիլիկիայի բոլոր սեբաստոսներից առաջին[38], իսկ այդ պատվանվան կրողը՝ կառավարեր երկրամասը։ Միայն նման ենթադրությամբ կարելի է բացատրել այն իրողությունը, որ մինչև 1162 թ. Կիլիկիայում չի հիշատակվում որևէ բյուզանդական պաշտոնյա։

Մեզ հայտնի հաջորդ բյուզանդական դուքսի մասին Հայոց ՈԺԱ (1162 թ. փետրվարի 9—1163 թ. փետրվարի 8) թվականի դեպքերի շարադրանքում վկայություն ունի Գրիգոր Երեցը. «Այսմամի սպանաւ Ստեփանէ եղբայր Թորոսի սեբաստիոսի մեծի՝ որդւոյ Լևոնի ենգութեամբ և դաւով տուկին անօրինի խեղդամահ արար զայնպիսի քաջ և երևելի զօրականն քրիստոնէից»[39]։ Այս նույն իրադարձությանը Միքայել Ասորին անդրադառնում է սելևկյան 1473 թ. (1161 թ. հոկտեմբեր—1162 թ. հոկտեմբեր) դեպքերի նկարագրության մեջ։ Նրա շարադրանքից (Միքայել Ասորու բնագրի այս հատվածը Բար Եբրեոսի բնագրով է վերականգնված) պարզվում է, որ Կիլիկիայի դուքսը Անդրոնիկոսն է, Կիլիկիայի հունական կառավարիչը (préfet grec de Tarse)[40]։ Երբ համադրում ենք դեպքերին ժամանակակից այս երկու հեղինակների վկայությունները, հայտնի է դառնում, որ իրադարձությունը եղած պետք է լինի 1162 թ. փետրվար-հոկտեմբեր ժամանակամիջոցին։ Հովհաննես Կինամոսն իր վկայությամբ հստակություն է մտցնում Անդրոնիկոսի ինքնության խնդրում, նշելով, որ Մանուել Կոմնենոսը Կիլիկիա է ուղարկած եղել իր ազգական Անդրոնիկոս Ֆերբենոսին, որը կիլիկյան զորքերի հրամանատարն էր։ Բյուզանդական պատմիչը տեղեկացնում է նաև, որ, Թորոս II-ը դրավում էր կայսեր ենթակա իսավրական քաղաքները՝ մեղադրելով Անդրոնիկոս Ֆերբենոսին ինչպես ուրիշ շատ բաներում, այնպես էլ իր եղբայր Ստեփանեի սպանության գործում[41]։ Եթե Անդրոնիկոս Ֆերբենոսին վերաբերող στρατηγός բայական ձևից փորձենք դուրս բերել նրա պաշտոնը, ապա այն այս տեղամ կհամապատասխանի զորավարին (στρατηγός)։ Այս տերմինին նորից հանդիպում է դառնում հայկական աղբյուրի առվը (գուքս), իսկ ասորական սկզբնաղբյուրի կառավարիչը (ֆր. թարգ. «préfet») (բնագրի հայերեն թարգմանության մեջ փոխարինվել է «իշխան» տերմինով)։ Սկզբնաղբյուրները Անդրոնիկոս Ֆերբենոսին կոչում են. ա) Կիլիկիայի զորահրամանատար[42], բ) Տարսոնի կառավարիչ[43], գ) դուքս «Յունաց յաշխարհն Կիլիկեցւոց»[44], դ) Համուսի դուքս[45]։

---

36 Մատթեոս, էջ 420։

37 Բյուզանդական կայսրության սահմաններում այս պատվանվան օգտագործման մասին տե՛ս L. Bréhier. Op. cit, p. 138–143.

38 Քանի որ խոսք եղավ Թորոս II-ի ստատուսի մասին, պետք է նկատի ունենալ Միքայել Ասորու ասորերեն բնագրում առկա Mare agra կոչումը։ Այս տերմինի վրա հատուկ ուշադրություն է հրավիրում Ժ.-Բ. Շաբոն, որն այն թարգմանում է լատիներեն «dominus mercides», (M. S, p. 304, n. 2)։

39 Մատթեոս, էջ 428։

40 M. S., t. III, p. 319։ Հմմտ. նաև Մ. Ա., 1871, էջ 445—446։ Միքայել Ասորու բնագրի այս հատվածը հրատարակիչը լրացնում է Բար Եբրեոսի «Ժամանակագրության» միջոցով (հմմտ. Մ. Ա., 1870, էջ 448)։

41 I. C., pp. 227—228.

42 I. C., p. 228.

43 M. S., p. 319.

44 Սմբատ, 1956, էջ 186։

45 Սմբատ, 1859, էջ 98, 1956, էջ 86։ Միայն Սմբատի Տարեգրության համառոտ խմբագրություններում հանդիպող այս կոչումը, մեր կարծիքով, Սմբատի երկի ընդարձակ խմբագրության անփույթ ընդօրինակման արդյունք է, ուր այդ հատվածը հետևյալ տեսքն ունի. «անօրէն տուկին Յունաց, յաշխարհն Կիլիկեցւոց, առջև Համուսին» (Սմբատ, 1956, էջ 186)։ Եթե դուրս նետենք ընդգծված հատվածը, նույնությամբ կստանանք Սմբատի համառոտ խմբագրությունների մատուցած տարբերակը։

Ինչպես տեսնում ենք, Անդրոնիկոս Ֆերբենոսի իշխանությունը տարածվել է ոչ միայն Դաշտային Կիլիկիայի վրա, այլ նաև, ինչպես կարելի է եզրակացնել Կիննամոսի բնագրից, Իսավրիայի, որը, թերևս, նրա իրավասությունների ոլորտում է եղել[46]։ Անդրոնիկոս Ֆերբենոսի ձեռքից Թորոս II-ը կարողացել է խլել Անավարզան և Թիլը (Թիլ Համտո՞ն)[47]։ Նշանակում է, որ թեև մինչև 1162 թ. Կիլիկիայում որևէ բյուզանդական դուքսի անվան չենք հանդիպում, այնուամենայնիվ կայսրության իշխանության տակ էին Դաշտային Կիլիկիայի հսկայական տարածքներ, որոնք 1158 թ. Մանուել կայսրը խլել էր Թորոս II-ից։ Ուշագրավ է նաև, որ դրանց մեջ է եղել Լեռնային Կիլիկիայի մայրաքաղաք Անավարզան։ Հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Անդրոնիկոս Ֆերբենոսի և Թորոս II-ի միջև ռազմական բախումից հետո, որպես հաշտարար դատավոր կամ, ինչպես միջազգային իրավունքի լեզվով են ասում՝ դատական միջնորդ, Կիլիկիայի դուքսը կանչում է ոչ թե Բյուզանդիայի կայսրին, այլ Երուսաղեմի թագավորին[48]։ Թվում է, թե այդ քայլը պետք է նշանակեր այն, որ Թորոս II-ը ամբողջովին մերժում էր իր տարածքների նկատմամբ Բյուզանդիայի գերակայությունը։

Կիլիկիայի ժամանակագրորեն հաջորդ դուքսը, որի մասին վկայություններ են պահպանել սկզբնաղբյուրները, Կոստանդին Կալամանոսն է։ Բյուզանդական այս կառավարչի հիշատակությանը հանդիպում ենք Վիլհելմ Սուրացու աշխատության բնագրում, Հարիմի ճակատամարտին (1164 թ. օգոստոս) մասնակցած իշխանների անունների մեջ։ Նրա մասին լատին ժամանակագիրը գրում է. «Կալամանոսը՝ Կիլիկիայի կուսակալը (praeses), տեր կայսեր աղգականը և կայսերական ողջ մարդի (նկատի ունի Կիլիկիան—Ա. Բ.) գործերի կառավարիչը (procurator negotiorum)»[49]։ Նույն բնագրի հին ֆրանսերեն տարբերակում Կալամանոսն անվանվում է Կիլիկիայի պայլ» (li bailliz de Cilice)[50]։ Այս անգամ Կալամանոսին դուքս են անվանում հունական, արաբական և ասորական սկզբնաղբյուրները։ Հովհաննես Կիննամոսը այս կառավարչի մասին գրում է. Նուր ադ-Դինը «ճակատամարտ տվեց Կիլիկիայի դուքս Կոստանդինին, որին Կալամանոս էին կոչում, տեսքով երիտասարդ, քաջ և գործունյա պատերազմում»[51]։ Ապա հույն պատմիչը խոսում է Հարիմի ճակատամարտի մասին և հավաստում, որ Կալամանոսը այդ ժամանակ դերի է ընկել։ Այս նույն դեպքին անդրադարձած Իբն ալ-Ասիրը[52], Անանուն Եդեսացին[53] և Միքայել Ասորին[54] միաբերան Կալամանոսին դուքս են անվանում։

Ամփոփելով այս դուքսի մասին մեր ասելիքը, նշենք, որ մեզ հետաքրքրող պաշտոնյան հունարեն, արաբերեն և ասորերեն բնագրերում անվանվում է Կիլիկիայի դուքս կամ հույների դուքս, իսկ լատիներեն բնագրում՝ Կիլիկիայի կուսակալ (praeses Ciliciae), «ողջ մարդի կայսերական գործերի կառավարիչ» (imperialum in alla provincia procurator negotiorum), «Կիլիկիայի կառավարիչ» (Ciliciae procurator), հին ֆրանսերեն թարգմանության մեջ՝ «Կիլիկիայի պայլ» կամ «Կիլիկիայի տարածքների պայլ» (li bailiz de Cilice կամ bailiz en la terre de Cilice)[55]. Այս բազմաքանակ հոմանիշների տակ, մեր կարծիքով, մեկ

---

46 I. C., p. 228.

47 Մ. Ա., 1871, էջ 446։

48 Մ. Ա., 1871, էջ 446։ Միջազգային հարաբերություններում Կիլիկյան Հայաստանը հաճախ էր օգտվում դատական միջնորդության ինստիտուտից, մանավանդ թագավորության շրջանում։ Այդ հարցերի մասին տե՛ս Ю. Г. Барсегов. Арбитраж в международных отношениях Армении эпохи античности и средних веков.—Историко-филологический журнал, 1982, № 1, с. 39—54.

49 Տե՛ս W. T., p. 896.

50 Նույն տեղում, էջ 896—897։

51 I. C., p. 216.

52 Extrait de la chronique intitulée Kamel-Altevarikh par Ibn-Alatyr, RHC, historient., t. I, Paris, 1872, pp. 538—539։

53 Անանուն Եդեսացի. Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Լ. Հ. Տեր-Պետրոսյանի. Երևան, 1982, էջ 123, 227, ծան. 362։

54 Հարիմի ճակատամարտին վերաբերող մեզ հետաքրքրող կտորը ևս Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ վերականգնվում է ըստ Բար Եբրեոսի մոտ պահպանված հատվածի (տե՛ս M. S., p. 324)։ Ասորական սկզբնաղբյուրում «դուքս» տիտղոսը անուն է ընկալվել։ Այդպիսի սխալ կատարել են նաև լատինական սկզբնաղբյուրները (տե՛ս F. Chalandon. Op. cit., p. 525, n, 2)։

55 Ուշագրավ է, որ նույն դեպքերի շարադրանքում Թորոս II-ը անվանվում է «հայերի հզոր

պաշտոն է թաքնված և նրանցից յուրաքանչյուրը միայն պարզաբանում է այդ պաշտոնի իրավասությունների շրջանակները։

Ինչպես միաբերան հաղորդում են բոլոր աղբյուրները, Կոստանդինը այդ ճակատամարտում գերի ընկավ, իսկ Մանուել Կոմնենոսը, որ այդ ժամանակ պատերազմում էր հունգարների հողում, Կոստանդին Կալամանոսի հայրենիքում, զորք է ուղարկում Կիլիկիա, կայսրության այդ մարզը թշնամիներից պաշտպանելու համար[56]։

Կիլիկիայի հաջորդ դուքսի մասին ժամանակագրական տեղեկություններ են հաղորդում հայկական սկզբնաղբյուրները։ «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուում պահպանված «Գիր հաւատոյ խոստովանութեան» թղթի վերնագրից իմանում ենք, որ այն գրվել է «ի խնդրու կերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց Մանուելի Ալեքսի մեծի Պռոտոստռատոռի, յորժամ ել յարեւելս եւ էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցւոց, ի թուականութեան Հայոց վեց հարիւր չորեքտասան»[57]։ Նշանակում է, թե Ալեքս «պռոտոստռատոռը» Կիլիկիայում պաշտոնավարել է 1165/6 թ.[58]։ Վերևում տեսանք, որ Կոստանդին Կալամանոսի գերի ընկնելուց հետո Մանուել կայսրը զորք է ուղարկել Կիլիկիա։ Գիտությանը հայտնի չէ 1164/5 թ. իշխած դուքսի անունը, սակայն պետք է ենթադրել, որ Մանուել Կոմնենոսը նշված թվականին նաև գորահրամանատար է առաքել Կիլիկիա։

«Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուում Ներսես Լամբրոնացին Ալեքսի զբաղեցրած պաշտոնի մասին գրում է. «Իշխան ոմն (խոսքը Ալեքսի մասին է—Ա. Բ.)՝ դուքս կարգեալ կողմանցս արեւելեայց։ Քանզի այս սովորութիւն է Հոռոմոց՝ ըստ շրջագայութեան ամի կարգեալ վերատեսուչ աշխարհաց հանել և փոխանակ նորա զայլ ոք առաքել։ Եւ այս այր իրրև զկորովամիտ և զիմաստուն յայնժամ եկեալ էր՝ փեսայ գոլով թագաւորին, և պատուով առաջին գոյ հեծելազորացն՝ որ կոչի յունարէն Պռոտոստռատոռ»[59]։

Այս վկայությունը չափազանց ուշագրավ է այն առումով, որ հեղինակը՝ Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին հաղորդում է, թե Բյուզանդական կայսրության մեջ սովորություն է տարին փոխվելու հետ միասին վերատեսուչ-դուքսին պաշտոնից ազատել և նրա փոխարեն այլ անձնավորություն նշանակել (հանգամանք, որը հավանաբար, հատուկ չէր Բյուզանդիայի վարչական ապարատի պատմության նախորդ՝ նախակոմնենոսյան փուլում)[60]։ Ուրեմն, Կիլիկիա յուրաքանչյուր տարի նոր դուքս էր ուղարկվում (այս իրողությունը հաստատվում է նաև մեր ուսումնասիրությամբ)։ Քանի որ բյուզանդական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն էր[61], ուրեմն դուքսերը պաշտոնատեղի էին ուղարկվում այդ ամսին, իսկ մի տարի անց, նույն ժամանակ, իրենց իրավասությունները հանձնում էին հաջորդ դուքսին։ Նման կարգ կայսրությունը հաստատել էր ապահովության համար, քանի որ նույն մարզում երկար պաշտոնավարելով դուքսերը կարող էին Բյուզանդիայից անջատվելու փորձ կատարել։

Բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսը Ալեքս Աքսուխի նշանակման մասին գրում է. «Իսկ Ալեքսին՝ դոմեստիկոսի (նկատի ունի Հովհաննես Աքսուխին—Ա. Բ.) որդուն, որը պրոտոնոտարի պաշտոն էր վարում, ինչպես բազմիցս հիշատակեցի, հիշարժան պատրաստությամբ ուղարկեց (Մանուել I-ը—Ա. Բ.) Կիլիկիայի երկիրը, այնտեղի պատերազմի ինքնիշխան զորա-

---

իշխան (Armenorum princeps potentissimum. *իսկ հին ֆրանսերեն ընագրում՝* pissanz princes d' Ermins (*տե՛ս* W. T., p. 896)։

[56] I. C., p. 217.

[57] *Ներսէս Շնորհալի. Թուղթ ընդհանրական. Երուսաղեմ, 1871, էջ 87։ Հմմտ. նաև Կիրակոս Գանձակեցի. Հայոց պատմություն. Երևան, 1961, էջ 121—122։*

[58] *Ալեքս Աքսուխի գալուստը Կիլիկիա 1165/6 թվականով է թվագրում նաև Կոստանդին Մեկիոսը (տե՛ս* Κ. Μεκιος. Ὁ μέγας δομεστικος τοῦ Βυζαντιου Ἰωαννης Ἀξουχος καὶ ο πρωτοστατωρ υἱου αὐτου Ἀλεξιος. Ἐν Ἀθηναις, 1932, σ. 44

[59] *Ներսես Շնորհալի. Թուղթ ընդհանրական, էջ 86—87։*

[60] *Տե՛ս, օրինակ Վ. Հարությունովա-Ֆիդանյանի կազմած Իբերիա թեմի կառավարիչների ցուցակը* (В. Арутюнова-Финданян. Византийские правители фемы Иверия.— Вестник общественных наук, 1973, № 2, с. 77, она же. К вопросу о термине «Восток» в конце X—XI в. (по данным о высших военных должностях Византийской империи. ВО, М. 1982, с. 137). *Հմմտ.* K. N. Yuzbashian. L'administration Byzantine en Arménie aux Xe—XIe siecles. REArm, t. X (1973—1974), pp. 182--183; H. Ahrweiler. Recherches..., p. 45։

[61] V. Crumel. La Chronologie. Traité d'études byzantines, t. I, Paris, 1958, p. 176։

բամանատար (στρατηγὸς αὐτοκράτορος) նշանակելով»[62]։ Ուրեմն՝ դուքս, վերատեսուչ (στρατηγός, αὐτοκράτορος) պաշտոնների անունները կրկին որպես հոմանիշներ են օգտագործված։ Դրանց զուգահեռ Ալեքս Աքսուխը կրում է նաև «պրոտոստրատորը» տիտղոսը[63]։ Բյուզանդական այս դուքսի կառավարման տարում կայսրության ռազմական և վարչական իշխանությունները Կիլիկիայում ուժեղացել էին։ Ալեքսի խնդիրների մեջ էր մտնում ետ մղել Նուր ադ-Դինի ծրագրվող արշավանքը դեպի Անտիոք և հակահարված տալ Կիլիկիայում հզորացող Թորոս II-ի իշխանությանը[64]։ Այդ քաղաքականության կոնկրետ արտահայտությունն էր Թորոս II-ի և Օշին Լամբրոնացու ռազմական բախումը, քանի որ վերջինս հավատարիմ էր մնում Բյուզանդական կայսրությանը[65]։ Հայկական սկզբնաղբյուրներում, Ռուբինյանների և Հեթումյանների միջև հիշատակված պայքարում որպես դատական միջնորդ է հանդես գալիս ոչ այլ ոք, քան Հայոց կաթողիկոսի եղբայրը։ Ալեքս Աքսուխի պաշտոնավարության հատկանշական կողմերից մեկն էր Բյուզանդիայի ակնհայտ միտումն է՝ հայերի հետ քաղաքական հաշտությունն ամրապնդել եկեղեցիների միության դաշինքի գաղափարով[66]։

Կիլիկիայի բյուզանդական հաջորդ դուքսը կրկին կայսեր ազգական Անդրոնիկոս Կոմնենոսն էր։ Նա մինչև 1165 թ. գտնվում էր Գալիչում[67], որտեղից վերադառնալով, ուղարկվում է Կիլիկիա։ Անդրոնիկոսի այս երկրորդ դքսության տարում Մանուել I Կոմնենոսը ընդլայնում է Կիլիկիայի դուքսի իրավասությունների շրջանակները, նրա պարտականությունների մեջ մտցնելով նաև Կիպրոսից հարկեր հավաքելու իրավունքը[68]։ Եթե Կիննամոսի բնագրում շեշտված է այդ հանգամանքը, ապա Նիկետաս Խոնիատեսը ընդգծում է Անդրոնիկոս Կոմնենոսի կառավարիչ-զորահրամանատար (ἡγεμὼν) լինելը[69]։ Պարզ է, որ Անդրոնիկոսը ոչ միայն Կիլիկիայի վերատեսուչն էր, այլև Կիպրոսի հարկերի գանձողը։ Այս նորամուծությունը՝ Կիլիկիայի և Կիպրոսի կառավարչական խնդիրներում, խոսում է այն մասին, թե որքան մեծ տեղ էր հատկացնում կայսրությունը Կիլիկիայի զորքերին։ Նիկետաս Խոնիատեսի պատմածից երևում է, որ Անդրոնիկոսը ևս չի կարողանում իրեն ենթարկել Կիլիկիան ու անհաջողության է մատնվում[70]։ Անդրոնիկոսը, սակայն, կարճ ժամանակ է մնում իր պաշտոնում և 1166 թ. մենք նրան տեսնում ենք Անտիոքում, իսկ 1167 թ.՝ Պաղեստինում[71]։ Այդ տարիների նրա գործունեության մասին տեղեկություններ է հաղորդում Վիլհելմ Սուրացին, շեշտելով, որ նա բյուզանդական ազնվական է՝ իշխան և կայսեր ազգականը[72]։

---

62 I. C., p. 227։

63 Այս տիտղոսի մասին տե՛ս R. Guilland. Études de titulature et de prosopographie Byzantines. Le protostrator. REB, t. VII, f. 2, 1950, pp. 156—179։

64 I. C., p. 227—228

65 1165/6 թ. Թորոս II-ը պատերազմում էր բյուզանդամետ իշխանների և Կիլիկիայի կայսերական պաշտոնյայի դեմ՝ պատճառ բռնելով իր եղբայր Ստեփանեի սպանությունը։ Այդ մասին է վկայում նաև Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» (1956, էջ 186), որի հեղինակը, սակայն, սխալվում է, երբ Ստեփանեի մահը ևս թվագրում է 1165 թ. (ՈԺԴ)։ Վերոհիշյալ հատվածում ժամանակագրական սխալ է թույլ տալիս նաև Հովհաննես Կիննամոսը. նրա մոտ դեպքերն այնպես են ներկայացված, որ կարծես թե Ալեքս Աքսուխից առաջ Կիլիկիայի դուքսը Անդրոնիկոս Ֆերբենոսն է եղել, մինչդեռ, ինչպես վերևում տեսանք, Հովհաննես Կիննամոսը ևս դիտե, որ այդ երկու դուքսերի միջև իշխել է Կոստանդին Կալամանոսը։

66 Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների մասին տե՛ս Լ. Զեքիյան. Համամիութենական տրամախոսություն մը ԺԲ դարուն.—«Բազմավեպ», 1977, № 3—4, էջ 591—636։ Ա. Բոզոյան. Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունները XII դարի 60—70-ական թվականներին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 150—163։ A. Keshishian. The problem of church Unity in Twelth century.—«Հասկ» հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Ա տարի, Անթիլաս, 1980, էջ 91—106։

67 Okt. Jurewicz. Op. cit., p. 56—70.

68 I. C., p. 250։

69 N. X., p. 137—138։

70 Նույն տեղում։ Հմմտ. նաև F. Chalandon. Op. cit., p. 529—530.

71 N. X., p. 139—140, I. C., p. 250, F. Chalandon. Op. cit., p. 529—530, Okt. Jurewicz. Op. cit., p. 74—75.

72 W. T., p. 943։

Կիլիկիայի հաջորդ դուքսի մասին վկայություն է թողել միայն Նիկետաս Խոնիատեսը: Ըստ նրա, Մանուել Կոմնենոսը, լսելով Անտիոքի իշխանադուստր Ֆիլիպպեի հետ Անդրոնիկոսի սիրային կապի մասին և իմանալով, որ նա չի արդարացրել իր հույսերը Կիլիկյան Հայաստանի վերաբերմամբ, կրկին Կիլիկիա է ուղարկում սեբաստոս Կոստանդին Կալամանոսին: Վերջինս Կիլիկիա է շտապում որպես «հայերի գործերի վերատեսուչ» (τοῖς κατ' Ἀρμενίαν μὲν ἐπιστατήσοντα πράγμασι)[73]: Կայսրը նոր դուքսի առջև խնդիր էր դրել կնության առնել Անտիոքի իշխանադուստր Ֆիլիպպեին, սակայն Կոստանդինի առաջարկությունը մերժվում է Ֆիլիպպեի կողմից[74]: Այս մտահղացումը ևս գալիս է հաստատելու այն միտքը, որ Մանուել Կոմնենոսը փորձում էր ամեն գնով կախման մեջ պահել Անտիոքի խաչակրաց իշխանությունը: Զախողված անտիոքյան ուղևորությունից հետո Կոստանդին Կալամանոսը ձեռնամուխ է լինում Կիլիկիայում ծավալված պատերազմական գործերին[75]: Իր իսկ սանձազերծած պատերազմում Կոստանդինը գերի է ընկնում, և կայսրը նրան ազատելու համար մեծ փրկագին է վճարում[76]: Ուշադրության արժանի է, որ Կիլիկիայի մարզի կենտրոնը, ըստ Նիկետաս Խոնիատեսի, կրկին Տարսոն քաղաքն է: Կոստանդին Կալամանոսը իշխում էր Կիլիկիայում Թորոս Ռուբինյանի իշխանության ամենավերջին տարում՝ 1167/8 թ.:

Կիլիկիայի հաջորդ դուքսերի մասին սկզբնաղբյուրները պահպանել են կցկտուր վկայություններ: Դրանց մեջ ամենակարևորը Կիննամոսի տեղեկությունն է[77]: Նա ցավով է արձանագրում, որ Բյուզանդիայի գործերը Կիլիկիայում գնալով վատանում էին. փաստորեն մարզի ողջ տարածքի վրա տնօրինում էին Ռուբինյանները: Կայսրությունը ոչինչ չշահեց և այն ժամանակ, երբ մահացավ Թորոս II-ը և իշխանության կառավարումը ստանձնեց նրա եղբայր Մլեհը (1167/8 թ.): Վերջինս իշխանության գլուխ էր անցել Նուր ադ-Դինի օգնությամբ և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց Հալեպի աթաբեկությանը: Մլեհի կառավարման տարիներին, ինչպես հավաստում է Կիննամոսը, բազմաթիվ դուքսեր են ուղարկվել Կիլիկիա, որոնցից միայն երեքի անունն է հիշատակում պատմիչը: Դրանք են՝ Միքայել Բրանասը, Անդրոնիկոս Ֆերբենոսը և Կոստանդին Կալամանոսը[78], որոնց բյուզանդական պատմիչը անվանում է στρατηγός[79]. Եթե հետևենք Կիննամոսի շարադրանքին և հիշենք, որ Կիլիկիայի դուքսը փոխվում էր «ըստ շրջագայութեան ամի», ապա կարելի է ենթադրել, որ Միքայել Բրանասը Կիլիկիայում պաշտոնավարել է 1168/9 թ., Անդրոնիկոս Ֆերբենոսը (երկրորդ անգամ) 1169/70 թ., իսկ Կոստանդին Կալամանոսը (երրորդ անգամ)՝ 1170—1175 թթ. միջև:

Սկզբնաղբյուրները հազվադեպ են հիշատակում հաջորդ տարիների Կիլիկիայի դուքսերին, բյուզանդական պատմիչները մոռացության են մատնում Կիլիկիայի գործերը: Այդ առումով եզակի վկայություն է պահպանել Նիկետաս Խոնիատեսը, որը Մանուել Կոմնենոսի իշխանության վերջին տարում հիշատակում է Կիլիկիայի բյուզանդական ևս մեկ կառավարչի՝ Իսահակ Կոմնենոսին, որը, ինչպես նախորդ դուքսերը, կրկին պատերազմի մեջ է մտնում Ռուբինյան իշխանության դեմ և գերի է ընկնում[80]: Նշանակում է, թե արդեն այդ ժամանակ Ռուբինյան իշխանությունը բացարձակապես անկախ էր կայսրությունից: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Իսահակ Կոմնենոսին գերությունից ազատում են Երուսաղեմի խաչակիրները[81]: Բյուզանդական մի այլ դուքսի հիշատակության էլ ծանոթ է Ֆ. Շալանդոնը[82]: Սրանցով ավարտվում են XII դարի երկրորդ կեսին Կիլիկիայում իշխած բյուզանդական դուքսերի մասին վկայությունները:

---

73 N., X., p. 140.

74 Նույն տեղում, էջ 140:

75 Նույն տեղում:

76 Նույն տեղում:

77 I. C., p. 286.

78 Հովհաննես Կիննամոսի պատմության հենց այս հատվածն էլ սխալ է հասկացել Ֆ. Շալանդոնը, մտածելով, թե այստեղ խոսքը վերաբերում է ընդհանրապես XII դարի 60-ական թթ. Կիլիկիայում կառավարած դուքսերին: Այդ պատճառով էլ Միքայել Բրանասի դքսությունը թվագրում է 1160 թ. (տե՛ս վերևում, ծան. 1):

79 I. C., p. 286:

80 N. X., p. 290:

81 N. X., p. 290; F. Chalandon. Op. cit., p. 527.

82 F. Chalandon. Op. cit., p. 527. Բյուզանդագետը այստեղ օգտվում է K. N. Sathas. Μεσαιωνικὴ Βιβλιοθήκη. Venedig, 1872—1877 հրատարակության երկրորդ հատորից (էջ 3), որը մենք չենք կարողացել ձեռք բերել:

Փորձենք կազմել XII դարի 40—70-ական թթ. Կիլիկիայում իշխած բյուզանդական դուքսերի ժամանակագրական ցուցակը.

1144/5 թ. Պրոսուխ

1151/2 թ. (՞) Թոմա

1152/3 թ. (՞) Անդրոնիկոս Կոմնենոս, առաջին դքսություն։

1153—1158 թթ. Թորոս II-ը կարողանում է Կիլիկիայում վերացնել բոլոր բյուզանդական իշխանությունները։

1159—1162 թթ. Կիլիկիայում որևէ դուքսի անուն չի հիշատակվում։ Թվում է, թե Թորոս II-ը, դառնալով Բյուզանդիայի ստորական և ստանալով պանսեբաստոսի պատվանուն, համաձայնության է եկել կայսրության հետ Կիլիկիայում այլևս դուքսեր չնշանակելու մասին։

1162/3 թ. Անդրոնիկոս Եփորբենոս, առաջին դքսություն։

1163/4 թ. Կոստանդին Կալամանոս, առաջին դքսություն։

1164/5 թ. դուքսի անունը անհայտ է։

1165/6 թ. Ալեքս Աքսուխ։

1166/7 թ. Անդրոնիկոս Կոմնենոս, երկրորդ դքսություն։

1167/1168 թ. Կոստանդին Կալամանոս, երկրորդ դքսություն։

1168/9 թ. Միքայել Բրանաս։

1169/70 թ. Անդրոնիկոս Եփորբենոս, երկրորդ դքսություն։

1170—1175 թթ. Թեև չգիտենք Մլեհի կառավարման տարիներին Կիլիկիայում իշխած բոլոր դուքսերի անունները, այնուամենայնիվ դրանցից մեկի՝ Կոստանդին Կալամանոսի (երրորդ դքսություն) անունը հայտնի է։

Եթե ի մի հավաքենք Կիլիկիայի կառավարիչների պաշտոնի մասին այլալեզու սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, հայտնի կդառնա.

ա) Հայկական սկզբնաղբյուրները գերակշիռ մեծամասնությամբ նրանց անվանում են դուկ կամ դուքս[83]։ Բյուզանդական աղբյուրներից միայն Կիննամոսն է մեկ անգամ հիշատակում այդ կոչումը[84]։ Պաշտոնի այդ անվանմանը հանդիպում ենք նաև ասորական և արաբական սկզբնաղբյուրներում[85]։

բ) Հայկական աղբյուրներում Կիլիկիայի կառավարիչները անվանվում են նաև վերատեսուչ[86]։ Այս իմաստով պետք է հասկանալ նաև Վիլհելմ Տյուրացու մոտ հանդիպող procurator (լատիներեն բնագիր) և bailliz (հին ֆրանսերեն բնագիր) տերմինները[87] և բյուզանդական պատմիչ Խոնիատեսի մոտ պատահող ἐπιστατήσοντα բայական ձևը[88]։

գ) Հայկական աղբյուրները դուքսերին անվանում են նաև կողմնապահ[89], որին զուգահեռ ենք համարում լատիներենի praeses տերմինը[90]։

դ) Հունական սկզբնաղբյուրներում ավելի հաճախ պատահում է στρατηγὸς αὐτοκράτωρ ձևը[91], որը ասորերեն սկզբնաղբյուրում ունի general (ըստ ֆրանսերեն թարգմանության)[92], իսկ նույն երկի գրաբարյան թարգմանության մեջ զորագլուխ[93] համարժեքները։ Հունական սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև սոսկ στρατηγὸς տերմինը[94]։

ե) Նիկիտաս Խոնիատեսը իր հիշատակած Կիլիկիայի ամենավերջին դուքսին անվանում է ἡγεμών[95], որի ասորական ձևն է, որ, մեր կարծիքով XIII դարի հայերեն թարգմանության մեջ

83 Մատթեոս, էջ 428։ Ներսես Շնորհալի, էջ 86։ Սամվել, էջ 214։

84 I. C., p. 216,

85 Անանուն Եդեսացի, էջ 123։ M. S., t. III, p. 324, RHC, hist. orient., t. I, pp. 538, 540.

86 Ներսես Շնորհալի, էջ 86։

87 W. T., pp. 896, 897.

88 N. X., p. 140.

89 Մատթեոս, էջ 400։ Սմբատ. 1956, էջ 170։

90 W. T., p. 896.

91 I. C., pp. 121, 227.

92 M. S., t. III, p. 310.

93 Մ. Ա., 1871, էջ 426, Մ. Ա., 1870, էջ 432։

94 I. C., p. 286.

95 N. X. p. 137.

փոխարինվել է իշխան[96] համարժեքով, իսկ նորագույն ֆրանսերեն թարգմանության մեջ՝ prelet հոմանիշով[97]։

Այժմ, խնդիրն ամբողջության մեջ պատկերացնելու համար, մոտավորապես սահմանագծենք այն տարածքները, որտեղ կառավարում էին Կիլիկիայի դուքսերը։ Սկզբնաղբյուրները մերկուս հիշատակված բոլոր պաշտոնյաների գործունեության տարածքը համարում են Կիլիկիան։ Սակայն Վիլհելմ Սուրացին, հավանաբար օգտվելով անտիկ աշխարհագրական տեղանվանացանկից (номенклатура), դրանք երկու՝ առաջին և երկրորդ Կիլիկիաներ, որոնցից մեկի մայրաքաղաքն էր Տարսոնը, մյուսինը՝ Անարզաբան[98]։ Այս վիճակը արձանագրված է նաև VII դարի հայերեն «Աշխարհացույցում». «Կիլիկիա... Լերունս ունի զՏարոս, եւ գետս վեց, եւ մայրաքաղաքս երկուս՝ զՏարսոն և զԱնարզաբա...»[99]։ Աղբյուրները տեղեկացնում են նաև, որ մինչև 1162/3 թ. կողմնապահության կազմի մեջ պետք է մտներ նաև Իսավրիան՝ Սելևկիա մայրաքաղաքով, որովհետև մինչև Անգրոնիկոս Ֆերբենոսի առաջին պաշտոնավարությունը այդ տարածքը հիշատակվում է Կիլիկիայի դուքսի իրավասության նեղքո։

Փորձենք նաև սկզբնաղբյուրների հատուկենտ վկայությունների հիման վրա պարզել դուքսերի իրավասությունների սահմանները։ Դրանցից առաջինը զինված ուժերի զորահրամանատարի՝ զորավարի պարտականություններն են. այդ է պատճառը, որ նրան էին ենթարկվում ոչ միայն Կիլիկիայում (մինչև 1163 թ. նաև Իսավրիայում) գտնվող կայսրության ռազմական ուժերը, այլև այն ավատատիրական իշխանական ընտանիքները, որոնք ընդունում էին Բյուզանդական կայսրության գերակայությունը։ Այդ հանգամանքը ընդգծված է սկզբնաղբյուրներում 1152 թ. դեպքերի կապակցությամբ։ Կիլիկիայի դուքսը կարող էր ռազմական գործողություններ ծավալել նաև իր կառավարությանը հանձնված տարածքից դուրս, այդ իմաստով հատկանշական է Կոստանդին Կալամանոսի մասնակցությունը Հարիմի նապատամարտին։ Կիլիկիայի դուքսը իրեն հանձնված տարածքում անսահմանափակ դինվորական իշխանություն ուներ։ Նա նաև քաղաքացիական պաշտոնյա էր, սակայն այդ պարտականությունների մասին սկզբնաղբյուրները գրեթե լռում են։ Դատելով Անդրոնիկոս Կոմնենոսին տրված՝ Կիպրոսում հարկ հավաքելու արտոնությունից, պետք է կարծել, որ դուքսերը նաև Կիլիկիայից ստացված եկամուտներն էին տնօրինում։ Կիլիկիայի դուքսը կայսեր ներկայացուցիչն էր Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստում և կարող էր տնօրինել նույնիսկ համապետական, համահանրային և միջազգային քաղաքական խնդիրներ։

ВИЗАНТИЙСКИЕ ПРАВИТЕЛИ КИЛИКИИ И КНЯЖЕСТВО РУБЕНИДОВ В 40—70-х ГОДАХ XII в.

А. А. БОЗОЯН

Резюме

В годы правления Иоанна II Комнина (1118—1143) восточная политика Византийской империи достигла больших успехов; после похода на Северную Сирию (1136—1138) в Киликии было восстановлено владычество империи, но при Мануиле I Комнине (1143—1180) армянское княжество Рубенидов отторгло от империи последние киликийские территории. В статье, на фоне политической борьбы князей Рубенидов против Византийской империи, рассматривается военная и административная деятельность назначенных в Киликию византийских чиновников. На основании сводного изучения греческих, армянских, латинских, сирийских и арабских источников мы пытаемся установить функции, территорию деятельности, последовательность и сроки правления византийских правителей Киликии 40—70-х годов XII столетия. В статье констатируется, что они наделялись властью сроком лишь на один год.

96 *Մ. Ա., 1871, էջ 446, 1870, էջ 448։*

97 M. S., t. III, p. 319.

98 *Տե՛ս* W. T., p. *695։ Ուշագրավ է ևս մի հանգամանք. Ներսես Լամբրոնացին, «Պատմութիւն» առաջաբանում օգտագործելով «գահ Կիլիկիոյ» հասկացությունը և՛ Թորոս II-ին, և՛ Օշին Հեթումյանին անվանում է «տէր... լեռնային կողմանցն Փոուգիոյ», որը ևս, մեր կարծիքով, անտիկ տեղանվանացանկի լուսաբանություն է (տե՛ս* Ներսես Շնորհալի, *էջ 86)։*

99 *Անանիա Շիրակացու մատենագրությունը, պատրաստեց՝ Ա. Գ. Արրահամյան. Երևան, 1944, էջ 346—347։*